



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

### ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհրդի 2014 թվականի հունվարի 14-ի թիվ 01/7-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման կարգ»-ի (**այսուհետ՝ Կարգ**) 2.2-րդ, 2.4-րդ, 2.5-րդ կետերով.

հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2016 թվականի համար հանրային պաշտպանների թափուր տեղերի քանակը կազմում է ընդամենը **17, այդ թվում՝**

1. Արարատի մարզում **երկու տեղ՝** մեկ լրիվ հաստիք քրեական ուղղվածության Մասիս քաղաքում և մեկ 0,5 հաստիք քաղաքացիական և վարչական ուղղվածության Արտաշատ քաղաքում.

2. Արմավիրի մարզ **երկու տեղ՝** մեկ լրիվ հաստիք քրեական ուղղվածության Էջմիածին քաղաքում և մեկ 0,5 հաստիք քաղաքացիական և վարչական ուղղվածության Արմավիր քաղաքում.

3. Լոռու մարզ - **երկու տեղ՝** մեկ լրիվ հաստիք քրեական ուղղվածության և մեկ 0.5 հաստիք քաղաքացիական և վարչական ուղղվածության (նստավայր Վանաձոր).

4. Տավուշի մարզ- **մեկ տեղ՝** 0,5 հաստիք քրեական ուղղվածության (նստավայր՝ Իջևան).

5. Սյունիքի մարզ - **մեկ տեղ՝** 0,5 հաստիք քրեական ուղղվածության (նստավայր՝ Կապան).

6. Վայոց Ձորի մարզ - **մեկ տեղ՝** 0,5 հաստիք քրեական ուղղվածության (նստավայր՝ Եղեգնաձոր).

7. Շիրակի մարզ- **երկու տեղ՝** մեկ հատ 0.5 հաստիք քրեական ուղղվածության և մեկ հատ 0.5 հաստիք քաղաքացիական և վարչական ուղղվածության (նստավայր Գյումրի).

8. Երևան քաղաքում- **հինգ տեղ՝** 5 լրիվ հաստիք քրեական ուղղվածությամբ.

9. Երևան քաղաքում- **մեկ տեղ՝** 1 լրիվ հաստիք քաղաքացիական և վարչական ուղղվածությամբ,

նկատի ունենալով այն հանգամանքը, որ գործնականում հանրային պաշտպանի թափուր հաստիքներ կարող են առաջանալ ոչ միայն տարեվերջին, այլ նաև տարվա ընթացքում, ինչպես նաև այն, որ անհրաժեշտության դեպքում հանրային պաշտպանի գրասենյակում չընդգրկված փաստաբանների հետ ժամավճարային դրույքաչափեր

**20 նոյեմբերի 2015թ.**

**թիվ 350-Լ**

**ք. Երևան**

նախատեսող աշխատանքային պայմանագրեր կնքելիս որպես կանոն նախապատվությունը տրվելու է հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակում ընդգրկված փաստաբաններին.

### **ՈՐՈՇԵՑԻ՝**

1. Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով անցկացնել երկու մրցույթ, այն է՝

1) քաղաքացիական և վարչական ուղղվածության հանրային պաշտպաններ նշանակելու համար մրցույթ՝ Երևան քաղաքի և մարզերի հանրային պաշտպանների թափուր տեղերը համալրելու համար, որի գրավ որ փուլը տեղի կունենա ք. Երևան Զաքիյան 2 հասցեում (Փաստաբանական դպրոց, 3-րդ հարկ) **2015 թվականի դեկտեմբերի 12-ին ժամը 12.00-ին**, իսկ հարցազրույցը՝ ք. Երևան Զաքիյան 2 հասցեում (Պալատ, 4-րդ հարկ) **2015 թվականի դեկտեմբերի 22-ին ժամը 11.00-ին**.

2) քրեական ուղղվածության հանրային պաշտպաններ նշանակելու համար մրցույթ՝ Երևան քաղաքի և մարզերի հանրային պաշտպանների թափուր տեղերը համալրելու համար, որի գրավոր փուլը տեղի կունենա ք. Երևան Զաքիյան 2 հասցեում (Փաստաբանական դպրոց, 3-րդ հարկ) **2015 թվականի դեկտեմբերի 12-ին ժամը 12.00-ին**, իսկ հարցազրույցը՝ ք. Երևան Զաքիյան 2 հասցեում (Պալատ, 4-րդ հարկ) **2015 թվականի դեկտեմբերի 22-ին ժամը 11.00-ին**:

2. Մրցույթներին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են 2015թ. նոյեմբերի 23-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 9-ը ներառյալ: Դիմումները կարող են ներկայացվել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (հասցեն՝ ք. Երևան, Զաքիյան 2) յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 10:00-ից մինչև 17:00-ն:

3. Հաստատել մրցույթին մասնակցելու համար դիմումի ձևը՝ համաձայն հավելված 1-ի:

4. Հաստատել մրցույթի քննական թերթիկի ձևը՝ համաձայն հավելված 2-ի:

5. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝

1) մրցույթի անցկացման վերաբերյալ Պալատի անդամներին տեղեկացնել եռօրյա ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով, ինչպես նաև Պալատի ինտերնետային կայքէջում և Պալատի վարչական շենքում (հասցեն՝ ք. Երևան, Զաքիյան փող., 3) գտնվող համապատասխան ցուցատախտակի վրա հայտարարությունը զետեղելու միջոցով.

2) օժանդակել մրցութային հանձնաժողովին մրցույթի կազմակերպման և անցկացման աշխատանքների կատարման համար, այդ թվում՝ ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

**20 նոյեմբերի 2015թ.**

**թիվ 350-L**

**ք. Երևան**

Հավելված 1  
Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի նախագահի  
20 նոյեմբերի 2015թ. թիվ 350-Լ  
որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹԻՆ  
ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ

Ձև  
Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատին

ՀՀ փաստաբանների պալատի անդամ,  
փաստաբան \_\_\_\_\_-ից  
(անուն, ազգանուն)

արտոնագրի N \_\_\_\_\_

մասնագիտական ուղղվածությունը  
\_\_\_\_\_  
(նշել քրեական կամ քաղաքացիական և վարչական)

աշխատավայրը \_\_\_\_\_  
(նշել ՀՀ համապատասխան մարզը և/կամ քաղաքը)

Էլեկտրոնային փոստի հասցեն՝  
\_\_\_\_\_

**Դ Ի Մ ՈՒ Մ**

Ցանկանում եմ մասնակցել \_\_\_\_\_  
(նշել քրեական կամ քաղաքացիական և վարչական)

ուղղվածության \_\_\_\_\_  
(նշել Երևան քաղաքում կամ մարզում)

հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով կազմակերպվող մրցույթին:

Հայտնում եմ, որ տիրապետում եմ համակարգչային հմտություններին:

Միաժամանակ, հայտնում եմ, որ համաձայն եմ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 2014 թվականի հունվարի 14-ի թիվ 01/7-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման կարգ»-ով նախատեսված դրույթների հետ:

Կից ներկայացվում է՝

գունավոր լուսանկարը 3x4 չափսի:

Դիմող՝ \_\_\_\_\_  
(անուն, ազգանուն, ստորագրություն)

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 \_\_\_\_ թ.

Հավելված 2  
Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի նախագահի  
20 նոյեմբերի 2015թ. թիվ 350-Լ  
որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹԻՆ  
ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՔՆՆԱԿԱՆ ԹԵՐԹԻԿԻ

Ձև

ՔՆՆԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Լուսանկար

Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով  
\_\_\_\_\_ ուղղվածության  
(նշել քրեական կամ քաղաքացիական և վարչական)  
մրցույթին մասնակցող հավակնորդ  
\_\_\_\_\_  
(անուն, ազգանուն)

1. Քննության գրավոր փուլի անցկացման վայրը՝ ք. Երևան, Զաքիյան 2 (Փաստաբանների դպրոց, 3-րդ հարկ):

Գրավոր քննության անցկացման ամսաթիվը \_\_\_\_\_, քննության սկիզբը (ժամը) \_\_\_\_\_, քննության ավարտը (ժամը) \_\_\_\_\_:

2. Հարցազրույցի անցկացման վայրը՝ ք. Երևան, Զաքիյան 2 (Փաստաբանների պալատ, 4-րդ հարկ):

Հարցազրույցի անցկացման ամսաթիվը \_\_\_\_\_, հարցազրույցի սկիզբը (ժամը) \_\_\_\_\_:

Քննությանն անհրաժեշտ է ներկայանալ սույն քննական թերթիկով և անձնագրով կամ փաստաբանական գործունեության վկայականով:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների  
պալատի աշխատակազմի ղեկավար՝

կ.տ.